



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն
համայնք, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ
zovashen.kotayq@mta.gov.am

N 62
27 դեկտեմբեր 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների
կից ներկայացվում է համայնքի ավագանու 22.12.2014թ կայացած վեցերորդ հերթական
նիստի որոշումները:

Առդիր 40 թերթ:

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՈՒԿ ՍԱՖԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 16

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածը, Զովաշեն համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել 2014 թվականի դեկտեմբերի 22-ի համայնքի ավագանու թիվ վեցերորդ հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

1. Մարզպետարանի կողմից Զովաշեն համայնքում իրականացված վարչական հսկողության ակտի քննարկման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու, գործունեության կարգը սահմանելու և հանրային բաց լսումներ կազմակերպելու մասին:
4. Զովաշեն համայնքի 2015 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին:
5. Համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:
6. Զովաշենի գյուղապետարանի աշխատակազմի 2015 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
7. Զովաշեն համայնքում աղբահանության վճարի դրույքաչափեր սահմանելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
9. «Հայաստանի Համայնքների Միություն» իրավաբանական անձանց միությանը անդամակցելու մասին:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷԿԵԼԻՄԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՈՎԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 17

ՄԱՐԶԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

Վարչական հսկողության ակտում արձանագրված թերությունները և խախտումները ընդունել ի գիտություն և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ :

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝



ՄԵՂՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅԵԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չովաշեն համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Չովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 18-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅԵԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
16-րդ հոդվածի, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Չովաշեն համայնքում տեղական ինքնակառավարմանը
բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ





ՀՀ Սահմանադրության 201 թ. Դեկտեմբերի 22-ի թիվ 184-Ն որոշմամբ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՋՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ Կոտայքի մարզի Զովաշեն համայնքի բնակիչների (այսուհետև՝ բնակիչներ) մասնակցությունը տեղական ինքնակառավարման կարգը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
2. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի և անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:
3. Բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև համայնքի ավագանու հաստատած սույն կարգով:

ԲՆԱԿԻՋՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

4. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:
5. գյուղապետարանի աշխատակազմը համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով:
6. Տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունք ունի համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:
7. Բնակիչները կարող են հանդես գալ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ ոչ պակաս, քան չորս տոկոսը: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին: Բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում

ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանում է ավագանու կանոնակարգով:

8. Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների նախաձեռնությունը ստանալուց հետո պարտադիր կարգով, ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է ավագանու նիստին՝ ավագանու քննարկմանը:
9. Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկել օրակարգում՝ դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո:

Համայնքի ղեկավարի լիազորությունները

10. Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքի ինտերնետային կայքը:
11. ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումների մասնակցելու ցանկություն հայտնաձև համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար:
12. կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առընչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լուծումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնողներին և նախագծերի հեղինակներին:
13. համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:
14. Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ):
15. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լուծումներ և քննարկումներ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Չովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, Էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 54.1-րդ հոդվածի, համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման), համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար ստեղծել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող <<Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին>> անվանումով խորհրդակցական մարմին/ այսուհետ՝ խորհրդակցական մարմին/ հետևյալ կազմով՝

- 1) գյուղապետարանի աշխատակազմից՝ Վահե Սաֆարյան և Քաջիկ Գասպարյան,
- 2) համայնքի ավագանու անդամներ՝ Ժորա Խաչատրյան, Էվելինա Մխիթարյան և Հակոբ Հակոբյան:

2. Սահմանել խորհրդակցական մարմնի գործունեության, հանրային բաց խումբների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱԶԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՈՎԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ





ՀԱՄԱՐՈՒՄԻՆԻ ՄԱՐԶԻ
Զուլաշեն համայնքի ամսապատկեր 2014 թ.
Դեկտեմբերի 22-ի թիվ 19/Ա որոշման

ԿԱՐԳ

<<Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին>> խորհրդակցական մարմնի գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զուլաշեն համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող <<Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին>> խորհրդակցական մարմնի /այսուհետ՝ խորհրդակցական մարմին/ գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը:
2. Խորհրդակցական մարմինը իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որը արձանագրվում է:
3. Հանրային լսումներին կարող են մասնակցել քննոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:
4. Հանրային լսումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է:
5. Գյուղապետարանի ինտերնետային կայքում հրապարակվում է Հանրային լսումների հրավեր, որը պարունակում է լսումների վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունման վերջնաժամկետի (եթե նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) մասին տեղեկություններ:

Հրավերը հրապարակվում է նաև գանգվածային այլ լրատվամիջոցներով, ժամանակակից հեռահաղորդակցման այլ միջոցներով և փակցվում է համայնքի ավագանու նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:

6. Հանրային լսումների հրավեր հրապարակելու հետ մեկտեղ ինտերնետային կայքում հրապարակվում է իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև այլ նյութեր:

7. Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել ինտերնետային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային

հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել աշխատակազմին: Եթե առաջարկությունները և դիտողություններն ուղարկվել են էլեկտրոնային հասցեով, ապա աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան դիտողությունները և առաջարկություններն ստանալու մասին:

8. Հանրային լուսմների հրավերը հրապարակելուց առնվազն տասներկու օր հետո իրականացվում է նաև հանրային կամ շահագրգիռ անձանց հետ բաց լուսմներ:

Աշխատակազմի ներկայացուցիչը նախապես նշանակված ժամին բացում է լուսմները, ներկայացնում է համապատասխան նախագծի համառոտ նկարագիրը, քննարկման հարցերի շրջանակը, աշխատակազմի ներկայացուցիչ հանդիսացող հանրային լուսմների քարտուղարին, ինչպես նաև մասնակիցներին տրամադրում է համապատասխան նյութեր քննարկումների վերաբերյալ, որոնք մինչ այդ հրապարակված չէին եղել ինտերնետային կայքում:

9. Հանրային լուսմների քարտուղարը կազմում է լուսմների վերաբերյալ գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է վերջինիս կողմից:

Արձանագրությունում պետք է ամրագրված լինեն լուսմներն իրականացնող մարմնի անվանումը, լուսմների ամսաթիվը, թեման, մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները: Մասնակիցները կարող են առաջարկությունները և դիտողությունները ներկայացնել նաև գրավոր: Գրավոր ներկայացված առաջարկությունները և դիտողությունները կցվում են արձանագրությանը:

10. Հանրային լուսմների արդյունքում քննարկման դրված հարցերի առնչությամբ ստացված յուրաքանչյուր առաջարկության ու դիտողության վերլուծության, ինչպես նաև դրանց ամփոփման հիման վրա կարող է կատարվել նախագծի անհրաժեշտ լրամշակումներ:

11. Հանրային լուսմների ավարտից հետո եռօրյա ժամկետում նախագծի լրամշակված տարբերակը և ստացված ու ընդունված առաջարկություններն ու դիտողությունները տեղադրվում է ինտերնետային կայքում և սահմանված կարգով ընդգրկվում է ավագանու նիստի օրակարգում ու տրամադրվում ավագանու անդամներին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶԻ ՉՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չովաշեն համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Չովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 20-Ն

ՉՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Չովաշեն համայնքի 2015 թվականի տարեկան բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաբանակների 15 % -ը :

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷԿԵԼԻՍԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝



ՍԵՂՈՎԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 21-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափը սահմանել 105820 (հարյուր հինգ հազար ութ հարյուր քսան) դրամ:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 22-Ա

ԶՈՎԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Զովաշենի գյուղապետարանի 2015 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱԶԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷԿԵԼԻՆԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՈՎԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ





Հոկաշենի գյուղական համայնքի Կառավարության
2014թ. Դեկտեմբերի 22-ի 22-րդ հիշգրտման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔՆՆԱԿԸ, ՀԱՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱԶԱԾՈՒԹՅՈՒՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

Հ/հ	Կազմակերպության նվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ճանկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Գյուղատնտեսության աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	1	105820	-	-	105820
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական	-	1	68783	-	-	68783
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայություն	1.2-1	1	76058	-	-	76058
4		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայություն	3.1-1	1	70106	-	-	70106
5		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայություն	3.2-1	1	70822	-	-	70822
6		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման	-	1	66138	-	-	33069
7		Պահակ	Տեխնիկական սպասարկման	-		66138	-	-	33069
	Ընդամենը				6	523865			457727

Համայնքի ղեկավար  Ս.Սաֆարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չովաշեն համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Չովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 23

ՉՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՋԱՆՈՒԹՅԱՆ ԿՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չովաշեն համայնքում սահմանել աղբահանության վճարի հետևյալ դրույքաչափերը .

1. Կենցաղային աղբի համար՝ հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ:

2. Ոչ կենցաղային և խոշոր եգրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2000 դրամ:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷԿԵԼԻԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՈՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Չովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015
ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջների՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չովաշեն համայնքում 2015 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույթաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱԶԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՈՎԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ





ՀՀ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԳԻ ԶՈՎԱԶԵՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ 2015 թվականի
2014թ դեկտեմբերի 22-ի N 24-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնքում 2015 թվականի
համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

Հ/հ	Տուրքերի տեսակները	Օրենքով սահմանված դրույքաչափը	Սահմանված դրույքաչափը
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝		
	հիմնական օբյեկտների համար՝		
1)	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	0-15000 դրամ	5 000 դրամ
2)	սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝		
ա.	201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	0-30000դրամ	10 000 դրամ
բ.	501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	0-50000դրամ	20 000 դրամ
գ.	1001 մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-50000դրամ	30 000 դրամ
դ.	3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-100 000 դրամ	50 000 դրամ
	ոչ հիմնական շինությունների տեղադրման համար		
3)	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-3000դրամ	3000 դրամ
4)	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	0-5000դրամ	5000 դրամ
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով		
1)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն	3000դրամ	3000 դրամ
2)	բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի « 1-ին » ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով		

3)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:		
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, բաղադրաչինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար	5000դրամ	5000 դրամ
4.	Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել		
1)	Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	0-17 500 դրամ	2000 դրամ
2)	Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար	1.500-17.500 դրամ	2000 դրամ
5.	Համայնքի տարածքում		
1)	բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար	0-350դրամ	350 դրամ
2)	Հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վաճառքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	150000-200000դրամ	150000 դրամ
3)	Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	30000-60000դրամ	30000դրամ
4)	համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլատվության համար յուրաքանչյուր տարվա համար	50000դրամ	50000 դրամ
6.	Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները) , խաղատները՝ ժամը 24. ⁰⁰ -ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար		
1)	առևտրի օբյեկտների համար	25000-50000 դրամ	25000 դրամ
2)	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	50000-100000 դրամ	50000 դրամ
3)	բաղնիքների (սաունաների) համար	200000-500000 դրամ	200000 դրամ
4)	խաղատների կազմակերպման համար	500000-1000000 դրամ	500000 դրամ
5)	շահումով խաղերի կազմակերպման համար	250000-500000 դրամ	250000 դրամ
6)	վիճակախաղերի կազմակերպման համար	100000-150000 դրամ	100000 դրամ
7.	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի		

	տեղական տուրք սահմանել		
1)	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	1000-2000 դրամ	1000 դրամ
2)	թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2500-3500 դրամ	2500 դրամ
3)	այլ արտաքին գովազդի համար	500-1500 դրամ	500 դրամ
4)	դատարկ գովազդային վահանակների համար	0-700 դրամ	700 դրամ
8.	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար	0-10000 դրամ	1000 դրամ
Տեղական վճարներ			
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար		5000 դրամ
2.	Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելուն վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափազրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար		5000 դրամ
3.	Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար		10000 դրամ
4.	Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝ 1) կենցաղային աղբի համար՝ հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական		100 դրամ
	2) ըջ կենցաղային և խոշոր եգրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝		2000 դրամ

ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝  ՍԱՖԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չովաշեն համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Չովաշեն, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ zovashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 25

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Անդամակցել «Հայաստանի Համայնքների Միություն» իրավաբանական անձանց միությանը:
2. Համայնքի բյուջեում նախատեսել Միության անդամավճար:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱԶԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷԿԵԼԻՆԱ

4. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ

Համայնքի ղեկավար՝

ՍԵՂՈՒԿ ՍԱՖԱՐՅԱՆ



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Զովաշեն համայնքի

ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 22 -ի N 20-Ն որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Սեդրակ Սաֆարյան

(Անուն, հայրանուն, ազգանուն)

ՀԱՏՎԱԾ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝		7360.7	7360.7	0.0
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, այդ թվում՝	7100	1318.0	1318.0	X
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում՝	7131	1132.9	1132.9	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		4.9	4.9	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		1128.0	1128.0	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	7136	185.1	185.1	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		185.1	185.1	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝	7145	0.0	0.0	X
1131	Տեղական տուրքեր, այդ թվում՝	71452	0.0	0.0	X
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար. ոռից՝		0.0	0.0	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		0.0		X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0.0		X
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		0.0		X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների ծանոցման թույլտվության համար		0.0		X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		0.0		X
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		0.0		X
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար		0.0		X
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		0.0	0.0	X
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ունտանի կենդանիներ ապահելու թույլտվության համար		0.0		X
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		0.0		X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1143	Ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		0.0		X
1144	Ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0.0		X
1145	Ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		0.0		X
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝	7146	0.0	0.0	X
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր, այդ թվում՝		0.0	0.0	X
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տրամադրելու համար		0.0		X
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և թղթափախ ծառայություններ տրամադրելու համար		0.0		X
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ, այդ թվում՝	7161	0.0	0.0	X
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ, ոռոգ՝		0.0	0.0	X
1162	ա) Եկամտահարկ		0.0		X
1163	բ) Շահութահարկ		0.0		X
1164	գ) Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ		0.0		X
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0.0		X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, այդ թվում՝	7300	4792.7	4792.7	0.0
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7311	0.0	0.0	X
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0		X
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ	7312	0.0	X	0.0
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	X	
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7321	0.0	0.0	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման հաստատված		0.0		X
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7322	0.0	X	0.0
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման հաստատված		0.0	X	
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, որից՝	7331	4792.7	4792.7	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		3500.0	3500.0	X
1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ, այդ թվում՝		0.0	0.0	X
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		0.0		X
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		0.0		X
1257	գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		1292.7	1292.7	X
1258	դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ, որից՝		0.0		X
1259	Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված		0.0		X
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, այդ	7332	0.0	X	0.0
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0	X	
1262	բ) Այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ, որից՝		0.0	X	
1263	Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված		0.0	X	
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝	7400	1250.0	1250.0	0.0
1310	3.1 Տոկոսներ, այդ թվում՝	7411	0.0	X	0.0
1311	Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ		0.0	X	
1320	3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝	7412	0.0	0.0	X
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե մուտքագրվող շահաբաժիններ		0.0		X
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝	7415	1250.0	1250.0	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		1250.0	1250.0	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		0.0		X
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վստահություններ		0.0		X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		0.0		X
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում՝	7421	0.0	0.0	X
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող աստիճանականության առժեռներին) վաճառքից մուտքեր		0.0		X
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար անտեսանելի բույժից ստացվող միջոցներ		0.0		X
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ		0.0		
1350	3.5 Վարչական գանձումներ, այդ թվում՝	7422	0.0	0.0	X
1351	Տեղական վճարներ		0.0		X
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար		0.0		X
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից, այդ թվում՝	7431	0.0	0.0	X
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		0.0		X
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տուգանքներ		0.0		X
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝	7441	0.0	0.0	X
1371	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինման անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին		0.0		X
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինման անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին		0.0		X

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	(հազար դրամով) այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝	7442	0.0	X	0.0
1381	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված պարզաբնակարանների		0.0	X	
1382	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված մեքենա և ավտոմեքենա		0.0	X	
1390	3.9 Այլ եկամուտներ, այդ թվում՝	7451	0.0	0.0	0.0
1391	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր		0.0	X	
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		0.0	X	
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		0.0		

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ՀՈՂԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱՐՆԵՐԻ
ԳԾՈՎ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Եկամտատեսակները	(հազար դրամով)		
		ապառքը տարեկանի դրությամբ	ապառքը տարեկանի դրությամբ	տվյալ տարվա հաշվարկային ժամկետ
Ա		1	2	3
1	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	0.0	0.0	4.9
2	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար	639.0	608.0	1097.0
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	0.0	0.0	185.1
4	Հողերի վարձակալության վարձավճարներ			X
5	Այլ գույքի վարձակալության վարձավճարներ			X

ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	(հազար դրամներով)	
						այդ թվում՝	
1	2	3	4	5	6	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
2000	X	X	X			7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	7360.7	7360.7	0.0
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝	6263.7	6263.7	0.0
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝</i>	6208.7	6208.7	0.0
